ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

14.10.2025 N 02-483

Արֆարմացիա ՓԲԸ-ի տնօրեն Ա. Հովհաննիսյանին
ՀՎՀՀ՝ 02505735
Հասցե՝ ք. Երևան, 0064, Ռաֆֆու 111
Հեռ՝ 060 75-99-99
Էլ. փոստ՝ tender@arpharm.am

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Հովհաննիսյան, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի և Արֆարմացիա ՓԲԸ-ի միջև 19. 12. 2024թ. կնքվել է ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07-2 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 24326933.98 (քսանչորս միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր երեսուներեքդրամինսունութ լումա) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

05.08.2025թ . պայմանագրի շրջանակներում Արֆարմացիա ՓԲԸ-ից պատվիրվել է «Պրոպոֆոլ 10մգ/մլ; 20մլ» դեղից 200 սրվակ, որը չի մատակարարվել: Բազմաթիվ հիշեցումներից հետո Արֆարմացիա ՓԲԸ-ն հրաժարվել է 2025թ . ընթացքում «Պրոպոֆոլ 10մգ/մլ; 20մլ» դեղի մատակարարումից: Պայմանագրով նախատեսված 1500 հատի փոխարեն մատակարարվել է 240 հատ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը, ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, պայմանագրի 8,11 կետը, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն մասամբ լուծում է և Արֆարմացիա ՓԲԸ-ի հետ կնքված ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ Պատվիրատուի 1930030219151000 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

- պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Դիանա Մադոյան
Գնումների համակարգող
Հեռ՝ 093023401